# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 39 - 40 (16536) ՇԱԲԱԹ, 20 ՄԱՅԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


## ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է




Մայիսի 26-ին Վրաստանը նշում է Պետական անկախության վերականգնման 99-րդ տարելիցը:

1918 թվականի մայիսյան այդ օրը, գրեթե հարյուրամյա ընդմիջումից հետո, վերականգնվեց 1801 թվականին ռուսական ցարի հրամանագրով վերացված վրաց պետականությունը: Սակայն Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությանը երկար կյանք վիճակված չէր: Այն կործանվեց խորհրդային զորքերի հարվածների տակ: Իրական անկախ պետության արժանանալու համար, հարկ էր անցնել 72 երկար ու ձիգ տարիներ, զգալ 1989-ի ապրիլի 9-ի կորստյան ցավը, ապա դառնալ Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում եղբայրասպան պատերազմների վկան, պարտվել, սակայն երբեք չհաշտվել պարտության ու երկրի մասնատման գաղափարի հետ: Եվ այսօր, պետական նոր անկախության 26-րդ տարում, նշելով անկախության վերականգնման 99-ամյա տարելիցի օրը, երկիրը հույսով, վստահությամբ ու համոզվածությամբ է նայում ապագային, վաղվա օրվան:

## ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է



1918թ. մայիսի 28-ից ի վեր Հայաստանում նշվում է Առաջին հանրապետության կամ Պետական անկախության վերականգնման օրը: Եվ այն վերականգնվեց գրեթե 600-ամյա ընդմիջումից հետո: Մայիսի 26-ին, Սարդարապատում հաղթելով օսմանյան բանակին, կրողացան փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից: Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց Հայկական ազգային խորհրդի կողմից 1918թ. մայիսի 28-ին, Թիֆլիսում: Այն գոյություն ունեցավ ընդամենը երկու տարի: Սակայն այդ երկու տարիները վիթխարի բարոյական նշանակություն ունեցան: Դա այն ժամանակն էր, երբ, անցնելով Ցեղասպանության արհավիրքները, Հայաստանը կռվեց վիթխարի Օսմանյան կայսրության դեմ ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի համար: Թեպետ, յոթ տասնամյակ անց, ստիպված կրկին պայքարելու էր ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի համար: Եվ կրկին հաղթեց, քանի որ նահանջելու իրավունք չուներ, որովհետեւ միայն այդ ձեւով ողջ աշխարհին կարող էր ապացուցել պատմական ազգ լինելու օրինական իրավունքը:

### ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՄՆ-ԻՑ ՍՏԱՑԱՆՔ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՍՏԱԿ ՈՒՂԵՐՁ»

*Մայիսի 18-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որտեղ վարչապետը ներկայացրեց իր գնահատականները ԱՄՆ կատարած պաշտոնական այցի վերաբերյալ:*



- Նոր վարչակազմի հետ ունեցանք բարձր մակարդակով հանդիպումներ, քննարկվեցին նշանակալի հարցեր, եւ մենք հստակ ուղերձներ ստացանք տարածքային ամբողջականության եւ ինքնիշ-


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ՝ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻՑ

*ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն շնորհավորական նամակ է հղել երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի կապակցությամբ:*

ԱՄՆ նախագահն իր շնորհավորական ուղերձում պատրաստակամություն է հայտնել շարունակելու համագործակցությունը Վրաստանի կառավարության հետ:

- Մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի կապակցությամբ, ցանկանում եմ ձեզ եւ վրաց ժողովրդին փոխանցել իմ անկեղծ ցանկություններն ու շնորհակալություն հայտնել մեր բազմամյա բարեկամության ու համագործակցության համար: Մեր համագործակցության քառորդ դարի ընթացքում, ԱՄՆ-ը եւ Վրաստանը հիմնել են տրանսատլանտյան կայուն մի-


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


### ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

### ՄՈՏ ՕՐԵՐՍ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՋԱՎԱԽԵԹՑԻՆԵՐԻՆ




*Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ, սահմանադրական հանձնաժողովի նախագահ Իրակլի Կոբախիձեն, սահմանադրական փոփոխությունների քննարկումը լրացուցիչ կարգով կանցկացվի եւս մի քանի քաղաքներում:*

Նրա խոսքով, մայիսի 16-ին մշակվել է սահմանադրական փոփոխությունների համաժողովրդական քննարկման շարունակման նոր ծրագիր:

- Ծրագիրը հետեւյալն է՝ շարունակել քննարկումները տարածաշր-


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


### ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

*Մայիսի 17-ին Վրաստանի փոխվարչապետ, կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան պաշտոնական այցով գտնվում էր Երեւանում:*



Այցի շրջանակներում, Վրաստանի կրթության գերատեսչության ղեկավարը հանդիպում ունեցավ Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին կրթության եւ գիտության ոլորտներում երկու երկրների միջեւ համագործակցության զարգացման ուղիները: Ընդգծվեց, որ երկու երկրների գիտակրթական համակարգերում առկա են միեւնույն մարտահրավերները, որոնց համար պետք է լուծումներ գտնել համատեղ ջանքերով եւ տարածաշրջանային ծրագրերով:

Բանակցությունների ավարտին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան ու Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը ստորագրեցին գերատեսչությունների համագործակցության հուշագիր:


(Շարունակությունը՝ 4-րդ էջում)


## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Մայիսի 16-ին, Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանն այցելեց Վրաստանի Գուրիայի երկրամաս: Օզուրգեթիում նա հանդիպում ունեցավ Գուրիայի նահանգապետ Գիա Սալուկվաձեի, տեղի երկրամասային եւ մունիցիպալային մյուս ղեկավարների հետ: Հանդիպմանը ներկա էին նաեւ Գուրիայի հայ համայնքի ներկայացուցիչները:*



Հանդիպման ընթացքում քննարկվեցին վրաց-հայկական համագործակցության շրջանակում Գուրիա երկրամասի հետ Հայաստանի առեւտրատնտեսական եւ մշակութային կապերի ընդլայնման հնարավորությունները:

Գիա Սալուկվաձեն եւ Եղիշե Սարգսյանը շոշափեցին արդյունաբերական, գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման եւ մատակարարման, ձեռնարկությունների կամ միմյանց տարածքներում դրանց մասնաճյուղերի ստեղծման, ինչպես նաեւ մշակութային հնարավոր փոխանակումներին առնչվող հարցեր:

Հայ համայնքի ներկայացուցիչների հետ Հայաստանի գլխավոր հյուպատոսի հանդիպման ժամանակ, քննարկվեցին կրթամշակութային խնդիրներ, որոնք առնչվում են կիրակնօրյա դպրոցի գործունեության բարելավման, սփյուռքահայության համար Հայաստանում կազմակերպվող ձեռնարկներին համայնքի ներկայացուցիչների մասնակցության հարցերին:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՄՆ-ԻՑ ՍՏԱՑԱՆՔ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՍՏԱԿ ՈՒՂԵՐՁ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խանության պաշտպանության ու ռազմավարական համագործակցության խորացման հարցում, ինչը վիթխարի նշանակություն ունի մեզ համար: Մենք գտնում ենք այցը արգասաբեր եւ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել արտաքին գործերի նախարարությանը, նախարարին: Վերջին ամիսներին նշանակալի աշխատանք կատարեց ԱՄՆ-ում մեր դեսպանը, եւ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նրան ու մեր դեսպանությանը, քանի որ այցը շատ լավ կազմակերպված էր,- կառավարության նիստում հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նշենք, որ Վրաստանի վարչապետը, ԱՄՆ կատարած պաշտոնական այցի շրջանակներում, մայիսի 8-ին հանդիպում ունեցավ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ՝ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻՑ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

ություն: Մենք կիսում ենք ընդհանուր արժեքները եւ դրանց պաշտպանության համար բարդ իրավիճակներում միասին կանգնած ենք միջազգային ահաբեկչության ու տարածաշրջանային անկայունության դեմ: Միացյալ Նահանգները պաշտպանում են Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Մենք նաեւ պաշտպանում ենք ապագան ինքնուրույն ընտրելու Վրաստանի իրավունքը: Վրաստանի անկախությունն ու ժողովրդավարությունը զարմացնում են ողջ աշխարհին,- ասված է Դոնալդ Թրամփի շնորհավորական ուղերձում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջաններում, դրանք կանցկացվեն տասը տարբեր մունիցիպալիտետներում: Տասը հանդիպումներ կանցկացվեն նաեւ Թբիլիսիում՝ ըստ շրջանների,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն եւ հավելեց, որ համաժողովրդական քննարկումներ կանցկացվեն Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի, Իմերեթիի, Սամեգրելոյի, Գուրիայի, Ռաճա-Լեչխումիի եւ մյուս տարածաշրջաններում:

Բացի այդ, ինչպես նշեց խորհրդարանի խոսնակը, առաջիկա մեկ ամսվա ընթացքում հանդիպումներ կանցկացնեն շահերի տարբեր խմբերի, համալսարանների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, երկրի մասշտաբով սկսվել են սահմանադրական փոփոխությունների համաժողովրդական քննարկումները:*

Սահմանադրական հանձնաժողովի կողմից առաջադրված նախագծի քննարկումը ծրագրվել էր անցկացնել երկրի յոթ խոշոր քաղաքներում: Մշակված ծրագրի համաձայն, համաժողովրդական քննարկումն ավարտվելու էր Թբիլիսիում: Մայիսի 16-ին, Թբիլիսիի ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում, ծրագրված էր անցկացնել սահմանադրական փոփոխությունների քննարկում: Հենց սկզբից հավաքվածների, առանձնապես ուսանողների աղմկահարույց վարվելակերպը թույլ չտվեց խորհրդարանի նախագահ, սահմանադրական հանձնաժողովի նախագահ Իրակլի Կոբախիձեին հանդես գալ ծրագրված ելույթով: Երիտասարդների բողոքը հիմնականում առնչվում էր սահմանադրական փոփոխություններում վրացական հողերի առքուվաճառքի թեմային: Քննարկմանը սրություն հաղորդեցին նաեւ սահմանադրության նախագծում ներառված ընտրական համակարգի փոփոխության, երկրի նախագահի ոչ անմիջական ընտրության եւ այլ հարցեր:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, ելնելով ստեղծված իրավիճակից, նպատակահարմար գտավ հետաձգել հանդիպումը:

- Նման ձեւաչափով հանդիպումը շարունակելն անիմաստ է,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն, թեպետ հրաժարվեց հստակեցնել, թե երբ կանցկացվի այդ հանդիպումը:

ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ԳՈՏԻ

## ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ, ՈՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՓՇԱԼԱՐԵՐԻ ԿՏՈՐՆԵՐԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

*«Համոզված եմ, որ ժամանակին փշալարերի կտորները կներկայացվեն նման թանգարաններում»: Այդ մասին հայտարարեց հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին Կասպիի «Բռնազավթման թանգարանում» կայացած հանդիպմանը, որին ներկա էին Շիդա Քարթլիի երկրամասի տարբեր մունիցիպալիտետների երիտասարդներ, ուսանողներ, տեղական ինքնակառավարման եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:*



Հանդիպմանը Քեթեւան Ցիխելաշվիլին խոսեց բռնազավթման պայմաններում առկա մարտահրավերների, Վրաստանի կառավարության խաղաղասիրական քաղաքականության առաջնահերթությունների մասին:

- Այստեղից մի քանի կիլոմետրի վրա անցնում է զավթիչների կողմից փշալարերով առանձնացված գոտին: Դուք այն մարդիկ եք, ովքեր բոլորից լավ են ընկալում այդ երեւույթի ծանրությունը, եւ ովքեր առօրյա առնչվում են բռնազավթման հետ: Բռնազավթումը ստեղծում է ոչ միայն անվտանգության ռիսկեր, այլեւ հումանիտար բարդ մարտահրավերներ, խախտում է մարդու հիմնարար իրավունքները: Այդ արհեստական արգելագծերով տարանջատված են ընտանիքները, գյուղերը, հասարակությունը: Բռնազավթումը չի ծառայում ո'չ վրացիների, ո'չ օսերի եւ ո'չ էլ աբխազների շահերին: Մենք՝ Վրաստանի կառավարության անդամներս, խաղաղությամբ, զարգացմամբ, կրթությամբ, լավագույն ապագայի հեռանկարով ենք հակադրվում այդ կոպիտ ուժին: Մեր հավասարակշռված, խաղաղ քայլերով կհաղթահարենք բռնազավթումն ու փշալարերը: Ձեզ հետ, ինչպես նաեւ խաղաղասեր լավագույն ապագային միտված մարդկանց հետ միասին, ովքեր Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում մեկուսացված են այդ արհեստական արգելագծերով, կհասնենք մեր նպատակին՝ հաշտեցմանը, երկրի միավորմանն ու եվրոպական արժեքների վրա հիմնված պետության մեջ խաղաղ համակեցությանը,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Պետնախարարը խոսեց նաեւ Ժնեւի միջազգային բանակցությունների եւ միջադեպերի կանխման ու դրանց հարցով արձագանքման մեխանիզմների շրջանակներում հանդիպումների ընթացքի մասին: Հանդիպման ավարտին պետնախարարը պատասխանեց առաջադրված հարցերին:

Հանդիպումն անցկացվեց «ոչ բռնազավթման» նախագծի շրջանակներում, որն իրականացնում է «Բարեկամության կամուրջ Քարթլոսը»:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*



ԱՄՆ

### ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ ԹՐԱՄՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ

*ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հսկողության եւ պետական բարեփոխման կոմիտեի, ինչպես նաեւ ստորին պալատի իրավաբանական կոմիտեի բոլոր 33 դեմոկրատները մայիսի 16-ին հանդես են եկել երկրի նախագահ Դոնալդ Թրամփի, արդարադատության նախարար, գլխավոր դատախազ Ջեֆ Սեշնսի եւ Վաշինգտոնի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետաքննություն վարելու օգտին:*

*Նրանք կոչ են անում «անհապաղ հետաքննություն սկսել եւ պարզել, թե Թրամփը եւ նրա վարչակազմի բարձրաստիճան պաշտոնատար անձինք մասնակցո՞ւմ են արդյոք այն հետաքննությանը խոչընդոտելու դավադրությանը», որը ԱՄՆ-ի Հետաքննությունների համապետական բյուրոն, արդարադատության նախարարությունը եւ Կոնգրեսը վարում են «Թրամփի նախագահական ընտրարշավի անդամների եւ ռուս պաշտոնատարների հետ նրանց շփումների նկատմամբ»:*

ԵՄ-ՈՒԿՐԱԻՆԱ

### ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄ՝ ՈՒԿՐԱԻՆԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Եվրոպական խորհրդարանի նախագահ Անտոնիո Տայանին եւ Եվրամիությունում նախագահող Մալթայի ներքին գործերի նախարար Կարմելո Աբելան Ստրասբուրգում ստորագրել են Ուկրաինայի եւ ԵՄ-ի միջեւ վիզային ռեժիմի վերացման մասին որոշում: Փաստաթղթի ստորագրման արարողությանը ներկա էր նաեւ Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն:*

*Այն ուժի մեջ կմտնի նշված փաստաթղթի հրապարակումից 20 օր անց:*

ՖՐԱՆՍԻԱ

### ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

*Ֆրանսիայի նորընտիր նախագահ Էմանուել Մակրոնը, երդմնակալության պաշտոնական արարողությունից հետո, Ֆրանսիայի նոր վարչապետ է նշանակել հանրապետության հյուսիս-արեւմուտքի Հավր քաղաքի քաղաքագլուխ, աջ կենտրոնամետ Էդուար Ֆիլիպին:*

*Հրապարակվել է նոր կառավարության կազմը, որն աշխատելու է երկրի նախագահ Էմանուել Մակրոնի հետ: Նոր կառավարությունում ներկայացվել են Մակրոնի գլխավորած «Հառաջ» շարժման, Ֆրանսիայի «Դեմոկրատական շարժման», «Հանրապետական» կուսակցության ներկայացուցիչները:*

ԻՐԱՆ

### ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Երեկ՝ մայիսի 19-ին, անցկացվեցին Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի ընտրությունները:*

*Երկրի գերագույն ղեկավարի պաշտոնին հավակնում է չորս թեկածու՝ գործող նախագահ Հասան Ռոուհանին, երկրի նախկին գլխավոր դատախազ Էբրահիմ Ռայիսին, մշակույթի եւ իսլամական կողմնորոշման նախկին նախարար Մոստաֆա Աղա Միրսալիմը եւ արդյունաբերության նախկին նախարար Մոստաֆա Հաշեմի Թաբան:*

*Հաղթելու համար, թեկնածուին անհրաժեշտ է հավաքել ձայների 50 տոկոսից ավելին: Եթե դա չհաջողվի անել թեկնածուներից որեւէ մեկին, կկայանա երկրորդ փուլը, որտեղ կմրցակցեն առաջին փուլի երկու առաջատարները:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ՍԼՈՎԱԿԻԱ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԺԻ ԱՌԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, երկօրյա պաշտոնական այցով, գտնվում էր Սլովակիայում:*

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը, դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, առանձնազրույց ունեցավ Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկայի հետ, ապա բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով:

Կողմերը քննարկեցին քաղաքականության մեջ, էկոնոմիկայում, մշակույթի եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները, ինչպես նաեւ առեւտրաշրջանառության ավելացման ոլորտում առկա ներուժի առավելագույն օգտագործման հնարավորությունները:

Գիորգի Մարգվելաշվիլին Սլովակիայի կողմին շնորհակալություն հայտնեց Սլովակիայի համալսարաններում սովորող վրաստանցի ուսանողներին կրթաթոշակ հատկացնելու համար:

Ընդլայնված կազմով բանակցություններին Վրաստանի կողմից ներկա էին եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Վիկտոր Դոլիձեն, Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին, անվտանգության խորհրդի քարտուղար Դավիթ Ռեխվիաշվիլին, Վրաստանի ԱԳ փոխնախարար Դավիթ Ջալաղանիան, միջազգային հարցերով նախագահի խորհրդական Թենգիզ Փխալաձեն, խորհրդարանի պատգամավորներ Մամուկա Չիքովանին, Ռոման Գոցիրիձեն եւ Ադա Մարշանիան:

ՎՐԱՍՏԱՆ - ՉԻՆԱՍՏԱՆ

# ՁԵՎԱԿԵՐՊՎԵՑ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ



*Վրաստանը եւ Չինաստանը ձեւակերպեցին ազատ առեւտրի համաձայնագիր: Համաձայնագրի կիրարկումից հետո, վրացական ապրանքների շուրջ 90 տոկոսը կազատվի Չինաստանի մաքսատուրքից:*

Ինչպես տեղեկացրել են Վրաստանի կառավարության աշխատակազմից, Վրաստանն առաջին երկիրն է տարածաշրջանում, որը Չինաստանի հետ ձեւակերպել է ազատ առեւտրի մասին համաձայնագիր: Այն վրացական ապրանքների համար բացում է 1,4 միլիարդ սպառող ունեցող չինական շուկայի դռները:

Ազատ առեւտրի մասին բանակցությունները Վրաստանի եւ Չինաստանի միջեւ մեկնարկեցին 2015 թվականի դեկտեմբերին: Բանակցությունների ավարտի մասին հուշագիրը Թբիլիսիում ստորագրվեց 2016 թվականի հոկտեմբերի 5-ին:

Նշենք, որ բավականին ավելացել է վերջին տարիներին Վրաստանի եւ Չինաստանի միջեւ առեւտրաշրջանառությունը: Չինաստանը Վրաստանի առեւտրական գործընկերների թվում չորրորդն է: Ավելացնենք, որ, ներկա դրությամբ, ազատ առեւտրի մասին պայմանագիր Վրաստանը կնքել է Եվրամիության, Թուրքիայի, ԱՊՀ երկրների եւ ազատ առեւտրի եվրոպական ասոցիացիայի հետ:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՍՏԱՏՎԵՑ «ԾԽԱԽՈՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

*Մայիսի 17-ին Վրաստանի խորհրդարանը հաստատեց «Ծխախոտի մասին» օրենքի փոփոխությունները:*

Օրենսդրական փոփոխությունների հաշվառմամբ, 2018 թվականի հունվարի 1-ից պարտադիր պահանջ է ներկայացնում, որպեսզի ծխախոտեղենի տուփերի վրա ներկայացվեն հիվանդությունների լուսանկարներ, որոնք կարող են ծագել ծխելու դեպքում:

2018 թվականի մայիսի 1-ից արգելվում է ծխախոտեղենի, այդ թվում՝ էլեկտրոնային սիգարետների եւ նարգիլեի օգտագործումը բոլոր փակ տարածքներում (նկատի են առնվում շինությունները, որտեղ պատերը 50 տոկոսից ավելի են), բացառությամբ՝ բնակարանների, հոգեբուժական հիվանդանոցների, պատիժների կատարման եւ նախնական կալանքի հաստատությունների, խաղատների:

Սիգարներ թույլ կտրվի ծխել սիգարբարերում, որտեղ կարգելվի տարբեր տեսակի պարենամթերքների վաճառքը, որպեսզի սիգար-բարերը չվերածվեն սրճարան-բարերի: Բացի այդ, բացօթյա սիգար բարերի համար հարկ կլինի ստանալ հատուկ հավաստագիր, ինչի հարցով օրենսդրական նախաձեռնությունն արդեն ներկայացրել է խորհրդարանին:

2018 թվականի մայիսի 1-ից կարգելվի ծխախոտեղենի գովազդումը: Միաժամանակ, այդ ժամանակահատվածում ֆիլմերի ցուցադրումը, որոնցում կլինեն դրվագներ՝ կապված ծխելու հետ, պարտադիր կլինի նաեւ ծխելու դեմ գովազդների ցուցադրում:

2018 թվականի սեպտեմբերի 1-ից առեւտրական օբյեկտներում կարգելվի ծխախոտեղենի տեղադրումը բաց ցուցափեղկերում: Արգելվում է նաեւ այսպես կոչված «դրայք» ծխախոտը:

2021 թվականից արգելքը կառնչվի նաեւ ծխախոտեղենի ներկայացմանը առեւտրական օբյեկտների ներսում, դրանք տեղադրվելու են անթափանց տեղում:



## ՆՇՎԵՑ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՕՐԸ

*Մայիսի 17-ին Վրաստանում նշվեց ընտանիքի սրբության օրը: Տոնի կապակցությամբ, Վրաստանի Ուղղափառ եկեղեցու հոգեւորականների ղեկավարությամբ, Վարդերի հրապարակով անցկացվեց տոնական երթ: Երթի մասնակիցներին իր օրհնությունը տվեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը:*

## ՊԱՏՎՈԳԻՐ՝ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

*Մայիսի 18-ին, Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի օրհնությամբ, յոթ եւ ավելի երեխա ունեցող հարյուր բազմազավակ ընտանիքներին հանձնեցին հատուկ պատվոգրեր: Այդ ընտանիքներին Սուրբ Երրորդության տաճարում օրհնեց Սենակիի եւ Չխորոծղուի միտրոպոլիտ Շիոն (Մուջիրի) հոգեւոր անձը, հանձնեց «Հայրենիքին նվիրված ծնողի պատվոգիր»: Օրհնության արարողությանը ներկա էր 7-ից 11 երեխա ունեցող տասը ընտանիք:*

## ՏՐՎՈՒՄ Է ՄԻԱՅՆԱԿ ՄՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

*Վրաստանի խորհրդարանում ձեւավորվել է աշխատանքային խումբ, որը աշխատում է միայնակ ծնողի կարգավիճակի կատարելագործման ուղղությամբ:*

*Պետսպասարկումների զարգացման գործակալության կողմից աշխատանքային խմբի ներկայացված տվյալներով, 2015 թվականի հունիսի 16-ից մինչ օրս, միայնակ հոր կարգավիճակի շնորհման մասին որոշում չի ընդունվել: Իսկ ինչ վերաբերում է միայնակ մոր կարգավիճակին, ապա այն շնորհվել է 1539 կնոջ:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(19 մայիսի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.395 | 2.455 |
| ԵՎՐՈ | 2.649 | 2.766 |
| ՌՈՒԲԼԻ | 0.04 | 0.046 |
| ԴՐԱՄ | 0.0038 | 0.0054 |

*Մայիսի 12-ի համեմատությամբ, դոլարի կուրսը նվազել է 0.008 լարիով:*

ՀԱՐՑՈՒՄ

# ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, ամերիկյան ժողովրդավարական ինստիտուտը (NDI ) ապրիլի 7-28-ին, Վրաստանի ողջ մասշտաբով (բացառությամբ բռնազավթված տարածքների), անցկացրեց հարցում: 2493 հարցման ենթարկվածների հետ հարցազրույցներն անցկացվեց Մեծ Բրիտանիայի կառավարության UK aid-ի ֆինանսական աջակցությամբ: Հարցումն անցկացրեց CRRC-Վրաստանը:*

### ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐԸ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ Է

Երկրում գործող ինստիտուտների գործունեության գնահատման հարցում հարցման ենթարկվածների մեծամասնությունը դրական է գնահատել Վրացական Ուղղափառ եկեղեցու գործունեությունը: Հարցման ենթարկվածների 51 տոկոսի կարծիքով, այն արդարացնում է իր գործունեությունը: Որպես արդյունավետ գործող հաստատություն՝ հարցման ենթարկվածների 85 տոկոսը գնահատել է Արդարադատության տունը: Հարցման տվյալներով, երրորդ հորիզոնականը՝ 84 տոկոսով, զբաղեցնում է ազգային բանակը, 70 տոկոսով՝ ոստիկանությունը: Այդ ցուցակում խորհրդարանը 59 տոկոսով զբաղեցնում է վերջին տեղերից մեկը:

### ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Է

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի հարցման արդյունքներով, Վրաստանի առողջապահության նախարարության գործունեությունը հարցման ենթարկվածների 79 տոկոսը գնահատել է լավ: 73 տոկոսով՝ այդ վարկանիշում երկրորդ տեղը զբաղեցնում է արդարադատության նախարարությունը: 67 տոկոսով՝ կրթության նախարարությունը աղյուսակում զբաղեցնում է միջին սանդղակները:

### ՀԵՏԸՆԹԱՑ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՈՒՄ

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքներով, այն հարցին, թե ո՞ր կուսակցությունն է հայացքներով ընդունելի, հարցման ենթարկվածների 38 տոկոսը նշել է, որ ոչ մի կուսակցություն չի համապատասխանում իրենց տեսակետին: 29 տոկոսի հավաստմամբ, իրենց հայացքները որոշակիորեն համընկնում են «Վրացական երազանքի», 10 տոկոսինը՝ «Միասնական ազգային շարժման», 4 տոկոսինը՝ «Վրաստանի հայրենասերների ալյանսի» հետ: Եվս 3 տոկոսը գերադասությունը տվել է «Լեյբորիստական» կուսակցությանը:

### ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ՆԱԽԱԳԱՀԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 7-28-ին երկրի մասշտաբով անցկացված հարցման տվյալներով, հարցման ենթարկվածների 84 տոկոսը գտնում է, որ նախագահը պետք է ընտրվի անմիջականորեն ընտրողների կողմից, 9 տոկոսը կողմնակից է ընտրողների կողմից նախագահության ընտրությանը, 2 տոկոսը դեմ է երկու տարբերակներին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

**ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ. «ՄԵՐ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ»**

Հայաստանի կրթության նախարարի խոսքով, Ալեքսանդր Ջեջելավայի նախարար նշանակվելուց հետո, կտրուկ եւ լուրջ փոփոխություններ են եղել երկկողմ հարաբերություններում՝ հանրակրթական, միջին եւ բարձրագույն կրթության ոլորտներում, ինչպես նաեւ գիտության բնագավառում, այն իմաստով, որ քայլեր են ձեռնարկվում անցնելու գործնական ծրագրերի՝ երկու երկրների կրթական հիմնախնդիրները քննարկելու եւ համապատասխան լուծումներ գտնելու համար:

- Մեր երկու երկրներն էլ նույն կրթական բարեփոխումների փուլում են՝ միաժամանակյա եւ միաձեւ հիմնախնդիրներով, եւ իսկապես համագործակցության մեծ հնարավորություն կա ոչ միայն երկկողմ, այլ նաեւ Հայաստան-Վրաստան դեպի Եվրոպա ուղղությամբ: Թե' բարձրագույն կրթության, եւ թե' գիտության մեջ մենք ունենք լուրջ համատեղ ծրագրեր, որոնք կարող ենք ներկայացնել մեր եվրոպացի գործընկերներին, քանի որ նաեւ նույն ակումբների անդամ ենք թե' «Հորիզոն-2020»-ի, եւ թե' Բոլոնիայի գործընթացի մասով, եւ այս ուղղությամբ կա լուրջ հնարավորություն: Այսինքն՝ պետք է փորձենք մեր երկրները դիտարկել իբրեւ մեկ միասնական կրթական տարածք՝ նույն խնդիրներով եւ նույն արժեհամակարգով,- ՝նշեց Հայաստանի նախարարը՝ ընդգծելով, որ ստորագրված փաստաթուղթը շատ կարեւոր է այն իմաստով, որ այն ոչ միայն մտադրությունների հուշագիր է, այլ նաեւ ունի հստակ առաջադրանք աշխատանքային խմբեր ձեւավորելու վերաբերյալ, որի արդյունքում՝ ընդամենը մի քանի ամսից անցում կարվի գործնական աշխատանքի:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ Է»**

Իր հերթին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան առանձնակի կարեւորեց երկկողմ հարաբերությունների զարգացումը:

- Իմ աշխատանքային առաջին այցերից մեկը հենց եղել է Ախալքալաքիում հայ մանկավարժների հետ հանդիպումը: Սա եւս մեկ անգամ ընդգծում է այն փաստը, որ մեր երկու երկրների համագործակցությունը լավագույն մակարդակում է վերջին տասնամյակում, իսկ այս պահին, կարծում եմ, այն ամենաբարձրն է: Մենք ունենք ընդհանուր խնդիրներ, նպատակներ եւ մոտեցումներ, որոնց արդյունքում մի շարք հստակ քայլեր են ձեռնարկվելու տարբեր ուղղություններով, մոտակա մի քանի ամսում: Առաջին ուղղությունը լինելու է հայկական դպրոցների որակի բարելավումը եւ հայոց լեզվի դասավանդման ծրագիրը: Հետեւաբար, մեր առաջին երկկողմանի համագործակցությունը հենց այս ուղղությամբ է լինելու: Այստեղ շատ կարեւոր է երիտասարդ ուսուցիչների վերապատրաստումը, որպեսզի վերջիններս պատրաստ լինեն նորովի մտնել դպրոցներ եւ կատարել մեծ փոփոխություններ: Մենք նախատեսում ենք որոշակի համատեղ գործընթացներ նաեւ բարձրագույն կրթության ոլորտում եւ հավատում ենք, որ կկարողանանք այդ ամենն իրականացնել միջազգային մակարդակով,- նշեց Ալեքսանդր Ջեջելավան՝ ընդգծելով, որ ձեւավորվող աշխատանքային խմբերի գործունեության առաջին արդյունքը մինչեւ տարեվերջ տեսանելի կլինի:



- Երկու հարեւան երկրները դարեր շարունակ թե' պատմական զարգացումների առումով, թե' կրթության եւ գիտության ոլորտներում ունեցել են համընդհանուր նպատակներ, որոնք պետք է շարունակական լինեն եւ լավագույնս ներկայացվի միջազգային ատյաններին,- հայտարարեց Վրաստանի ԿԳ նախարարը:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՑԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

Նշենք, որ, հուշագրի համաձայն, կողմերը պարտավորվում են զարգացնել անմիջական համագործակցություն երկու երկրների բարձրագույն կրթական, գիտական եւ հետազոտական հաստատությունների միջեւ, խթանել կրթական համակարգերի կառուցվածքի, բովանդակության եւ համագործակցությունը բարելավելու նպատակով կազմակերպման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում:

Ըստ համաձայնագրի, կողմերը հանրակրթական, միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթության, գիտության ու հետազոտության ոլորտներում կստեղծեն աշխատանքային խմբեր: Նախատեսվում է փոխադարձ հիմունքներով տրամադրել բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրոսական աստիճանի առավելագույնը 10 կրթաթոշակ:

Վրացական կողմը պարտավորվում է Հայաստանի քաղաքացիներին ազատել Վրաստանի պետական բարձրագույն կրթական հաստատություններում ուսման վճարից, եթե այն չի գերազանցում 2250 վրացական դրամական միավորը: Հայկական կողմը պարտավորվում է Վրաստանի քաղաքացիներին ազատել Հայաստանի պետական բարձրագույն կրթական հաստատություններում ուսման վճարից, եթե վերջինս չի գերազանցում 1.000.000 դրամը:

Երկու կողմերից առաջադրված ուսանողները պարտավորվում են հավաստել դասավանդման լեզուների որոշակի մասնագիտացման մակարդակ (անգլերեն եւ ռուսերեն), հակառակ դեպքում, ուսանողները պարտավորվում են հանձնել տվյալ բարձրագույն կրթական հաստատության կողմից կազմակերպված որոշ ներքին քննություններ:

Վրաստանի ԿԳ նախարարի գլխավորած պատվիրակությունն այցելեց Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, ծանոթացավ հին ձեռագրերին, եղավ Մ.Սեբաստացի կրթահամալիրում եւ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ-«ՎՐԱՍՏԱՆ»*



ՀԱՄԱՅՆՔ

## ՌՈՒՍԹԱՎԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

***Մայիսի 13-ին, Ռուսթավի քաղաքում, հանդիսավորապես բացվեց Վիրահայոց թեմի Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոն:***

Վարձակալված շենքը գտնվում է քաղաքի կենտրոնում, այն վերանորոգված ու բարեկարգված է, հագեցած՝ գույքով եւ պարագաներով, տեխնիկապես ապահովված: Ներքին տոնական զարդարանքը առանձնահատուկ փայլ էր տվել կենտրոնին:

Միջոցառմանն իր օրհնաբեր ներկայությունն էր բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Թեմակալ առաջնորդը կտրեց Կենտրոնի մուտքի ժապավենը եւ օրհնեց աղն ու հացը, որով դիմավորեցին նրան:

Կենտրոնում գործելու է Սուրբ Եղիշեի անվան կիրակնօրյա դպրոցը, որտեղ ցանկացողները կսովորեն տառաճանաչություն, կտեղեկանան իրենց հոգեւոր, մշակութային եւ պատմական ժառանգության մասին, կգործեն «Բերկրի» երգչախումբը, որտեղ կսովորեն երգել ինչպես հոգեւոր, այնպես էլ՝ ժողովրդական, էստրադային երգեր եւ «Նեմրութ» պարային համույթը, որտեղ կպարեն հայկական «Քոչարի», «Յարխուշտա» ու այլ պարեր:

Ռուսթավիի հայկական կրթամշակութային կենտրոնի խնամատար նշանակվեց Տեր Նարեկ քահանա Ղուշչյանը:

Հանդիսությանը ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդականներ Կարեն Մելիքյանն ու Կարեն Պարունակյանը, հյուպատոս Էլինա Մկրտչյանը, Վիրահայոց թեմի պաշտոնեությունը, հասարակական գործիչներ, հյուրեր եւ բազում ռուսթավցիներ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

თიბისი ბანკი TBC BANK

## «ՍՏԱՐԹԱՓ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԿ

***TBC բանկի «Ստարթափ» ծրագրի շրջանակներում, երկու ամսվա ընթացքում, վարկի տեսքով տրվել է մեկ միլիոն լարիից ավելի գումար: Ծրագրի մեկնարկից սկսած՝ «Ստարթափից» արդեն օգտվել են 30 սկսնակ գործարարներ, ովքեր գործում են տարբեր, այդ թվում՝ կոշիկի եւ հագուստի արտադրությունում տեխնոլոգիաների ուղղությամբ, ագրոհատվածի, ձեռագործ իրերի, հյուրանոցների շինարարության եւ այլ ոլորտներում:***

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում, արտոնյալ բանկային սպասարկումներից օգտվել է ավելի քան 3 հազար քաղաքացի: Ծրագրի կայք-էջում տեղակայված հատուկ ստարթափների համար հիմնված թվացանկում արդեն ներառված է ավելի քան 200 ստարթափ: Այդտեղ տեղակայված է նաեւ վերջիններիս կոնտակտային տեղեկատվությունը, եւ հնարավորություն է տրված անմիջականորեն սոցիալական ցանցերով առնչվել նրանց հետ:

Ծրագրի մեկնարկից հետո, երկու ամսվա ընթացքում, հատուկ ստարթափների համար ձեւավորվել են սպասարկումներ՝ ստարթափ-էներջի քարտեր եւ ստարթափ-լիզինգ: Ստարթափ-էներջին «Սոկար պետրոլիում Ջորջիայի» եւ TBC բանկի համատեղ քարտն է, ինչը ստարթափների համար ցանկացած վառելանյութի համար նախատեսում է 15 թեթրիի արտոնյալ պայման: Ստարթափ-լիզինգը նպաստում է ստարթափների համար գործարարության զարգացմանը խրախուսող սարքավորումների ձեռքբերման գործում՝ վերջիններիս համար սահմանված անհատական ժամանակացույցի ներդրմամբ: Երկու ամսվա ընթացքում ստարթափ-էներջի քարտից օգտվել է ավելի քան 100 ստարթափ:

Ֆինանսական աջակցությունից բացի, ծրագիրը նախատեսում է նաեւ ոչ ֆինանսական այլ ակտիվություններ: Մասնավորապես, ստարթափների շրջանակներում, շուրջ 200 սկսնակ գործարար անցել է վարժանքների եւ հմտությունների հատուկ դասընթաց, ինչը նրանց հնարավորություն է տվել բարելավել գործարարությունը վարելու հմտություններ:




Ծրագրի եւս մեկ բաղկացուցիչ մասը ստարթափների ժողովրդականացման արշավն է: Ծրագրի մեդիա գործընկերներ «Գործարար առավոտ» հաղորդումը եւ «Ստարթափների» համատեղ «Ստարթափ» միասնական խորագրի եւ Ambebi.ge, Bpn.ge, 4motivi.com եւ Marketer.ge կայք-էջերը սկսնակ գործարարներին եւ ընկերությունների հիմնադիրներին ներկայացրին հասարակայնությանը: Ծրագրի շրջանակներում, նրանց վերաբերյալ պատրաստվել է ավելի քան 70 հոդված-ռեպորտաժ:

- TBC բանկի համար բիզնեսի աջակցությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն է: «Ստարթափների» ծրագրի նպատակը հենց դա է՝ «Ստարթափների» աջակցություն եւ բիզնես սկսելու քարոզարշավ: Ծրագրի մեկնարկից մինչ օրս բազում նախաձեռնություններ են իրականացվել, եւ «Ստարթափների» համար ծրագրված են շատ նորամուծություններ: Մոտ ապագայում «Ստարթափների» համար մշակվում են նոր սպասարկումներ: Դա իրականացվում է սպառողական շուկայի տարբեր լիդեր ընկերությունների հետ միասին: Բացի այդ, մոտ մեկ ամսում կներդրվի ստարթափ քարտը, ինչը, «Քեշբեկ» համակարգի սկզբունքով, «Ստարթափներին» արտոնություններ կառաջարկի տարբեր ապրանքների կամ սպասարկումների ստացման համար,- հայտարարեց TBC բանկի գլխավոր փոխտնօրեն Նիկա Քուրդիանին:

Վերոնշյալ ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն հնարավոր է ստանալ «Ստարթափների» www.startuperi.ge կայք-էջից: